## 52. ՔՅԸՆԱՅՈՂԸ ԵՏ ՉԻ ԵԿՈՂ ՍԱՐԸ

Ընում ա, չնում մին մարթ, մին կնեգ։ Տահանց ընում ա քառասուն աղա։

Մին օր էտ տղորանցանը մեծը ասում ա. — Քյնանք, աշխարքը շոռ կյանք, մզետե հարուստութուն ծեռք պիրինք։

Էտ պայմանը կպես վախտը քառասունինշի ախպերը տանը չի ընում։

Առանց տրան ընցնում ըն, քյունում։ Էտ քառասունինշի ախպերը կյամ ա, տեսնում ախպերքը տանը չըն։

Հրցնում ա. — Ա՛ մար, պա ախպերքս հո՞ր ըն։

Մարն ասում ա. — Գյուղում չըմ։

Եշում ա, տեսնում ախպերքը կյամ չըն։

Էքյսը էս կուճուր ախպերը լաց ա ընում, ասում. — Ցրես առանց ախպերքս կարում չըմ կենամ, ա՛ մար, տեղն ասե։

Վերջը մարը էտ խոխեն ծեռքեն շանա յա կյամ, ասում ա. — Բա՛-լա, դե քու ախպերքտ աշխարքս շոռ կյալու չըն քյեցալ, ապրուստ ճարեն, քյըեզ էլ տարալ չըն ընդրա հետե, վեր շատ ըս պիծի, կարել չըս ընդրանց նհետ շոռ կյաս։

Էտ պիծի թաղվածը եր ա կենում տրանց հետան քյունում։

Հաՙրը տրան մին սոր ա տամ, ասըմ. — Քշերը էս սորը կը տինիս կլխըտակետ։ Թա քշերը էտ սորեն կեսը տուս կյա, ըռաշկետ աջալ կա, վեր էրկունշի քշերը լոխ տուս կյա, ըտրանա էլ իվիլ աջալ կա, վեր իրեքինշի քշերը տուս կյա, տափըմը խրվե, ըտրանց անա

էլ իվիլ աջալ կա։ Էտ կուճի տղան էտ սորը յոր ա օնում, քյընում։

Շատ ա քյնում, խրեգյ ա քյընում, տեսնում ա մին ավերակ ճեղաց։ Տեսնում ա ճեղացումը ուրան ախպերքը քոն իլած, էտ սորը տնըմ ա կլխըտակեն, քոն ինում։

Քշերը մին վախտ եր ա կենում, տեսնում սորեն կեսը կլխըտական տուս եկած։ Եր ա կենում թողում ախպերքը քոն իլած, սորը յոր օնում, քյընում։

Շատ ա քյընում, խրեգյ ա քյընում, տեսնում ա շատ փիս թոզ ա անում։ Մուտանում ա տեսնում մին մեծ կլխանի օշափ։ Էտ տղան օշափեն կլխան շատ ա վախըմ։

Օշափն ասում ա. — Ամեգյը մին զարկ օնինքյ. առաչ յրես, հետավ տու։

Տղան համոզվում ա։

Առաչ օշափն ա զարկում։ Էտ տըղեն ծին պըցրանում ա երգյինքյը, տղան ազատվում ա։ Հերթը հըսնում ա էտ տզին։ Տղան զարկում ա, օշափի կլոխը կես ա տեռնում։ Էտ տղան յոր ա օնում օշափին կլոխը կտրում, քցում խուրշինին մաչը, ետ քյընում ախպորքը կոշտը։ Տրանց վեչ մին պեն ասում չի։ Սուսրփուս քոն ա ինում։

Քշերավ էտ ախպերքը եր ըն կենում, տեսնում պուճուր ախպերը քոն իլած։

Մեծ ախպերն ասում ա.— Մին քացի տվեք, եր կենա։

Եր ըն կցընում, քյընում։

Շատ ըն քյընում, խրեգյ ըն քյընում, մին ավերակի յրն պտահում։ Էտ ավերակումը քոն ըն ինում։ Էտ քշեր պիծի տղին սորը սաղ տուս ա կյամ։ Տղան եր ա կենում, քյնում տեսնում էլհա թոզ ա պըցրանում։ Էս դոնըմ տղան շատ փիս վախըմ ա։ Մուտանում ա, տեսնում էրկու կլխանի օշափ։

Օշափն ասում ա. — Ամեգյը մին զարկ օնինք։ Առաչ՝ յրես, ետավ՝ տու։

Օշափը զարկում ա։ Էտ տղեն ծին երգյինքյ ա պըցրանում։ Տղան ազատվում ա։ Ետնան տըղան ա զարկում, օշափին էրկու կլոխը կտրում։ Էտ տղան ուրխացած կլոխնին յոր ա օնըմ, քյընում, էլա սուսրփուս կյամ, քոն ինում։

Առավոտը ախպերքը եր ըն կենում ասում.— Մին էտ լակուտին եր կցրեքյ, հալա խրար պիրողին յշեցեք։

Էտ կուճի տղին եր ըն կցնում, էլհա ճրնապարվում։

Էս դոնում մին ավերակ եխծե յա պտահում։ Քշերը ըտեղ քոն ըն ինում։ Քշերը սորը տուս ա կյամ, տափը խրվում։ Տղան եր ա

կենում, քյնում տեսնում իրեքինջի ախպերը՝ իրեք կլխանի օշափը թուլ ինելավ կյամ ա։

Տղան էս գոնում վախում չի, սրտրպնդված ա ընում, մուտանում ա օշափին։

Օշափն ասում ա. — Իմ ախպորցս կլոխը հալբաթ կերալ ըս, վեր ըստեղ չըն։ Ջա՛հիլ տղա, ամեգյս մին զարկ օնինք, առաչ՝ յրես, ետավ՝ տու։

Օշափը զարկում ա, ծին պըցրանում ա երգյինքյը, տղան էլհա ազատվում ա, օշափին էրկու կլոխը կտրում ա, մինը յարալու անըմ, ետ քյնում։ Տղան թաքուն քյնում ա օշափեն հետան տեսնում ա օշափը նի յա մննում մին վերի մաչ։

Մին պատառ սպասում ա, ետավ ընդրա հետան նի մննում էտ վերը։ Տեսնում ա մին ըխճկա գյուրդյում քոն իլած։

Ախչիգյը վեր էտ տըղին տեսնում ա, ասում ա. — Ետ քյնա, օշափը փիս կզնված ա, քյրեզ պըտրռ-պատառ կանի։

Տղան ասում ա. — Տու սուս ըրա, յրես տրան դիվանը ընելու յըմ։

Մին գոնըմ վեր թխում ա, օշափը մնում ա ըխճկանը գյուրդյումը։ Տղան քյրնում ա էն մին օթախը, տեսնում ընդեղ քառասուն ախճիգյ։ Տրանց անա, ամման մինան մին մուտանա յա հանում, տանում հըսցնում ուրան ախպորցը, մուտանեքյը հաքցնում ախպորցը մանները։

Ախպերքը քոն իլած տեղան հալա զուրթնանում չըն։ Պուճուր տղան քոն ա ընում։ Ուռութանան եր ըն կենում, տեսնում նա քոն իլած։ Ըտրանք սկսում ըն իրեսնին լվանալը, տեսնում լոխճին մաններումը մուտանա կա։ Կուճուր ախպերը զարթնում ա, տեսնում ախպերքը զարմացած։

Ախպորցը յոր ա օնըմ, քյրնում էտ ախճկորանցը կոշտը։ Ամեգյը մինը յոր ըն օնըմ, ճընապար ընդնում։ Քյնալիս վախտը մին կյետ ա պըտահում։

Էտ կյետավը ընցնելի վախտը կյետան մին մարթ ա տուս կյամ, պիծի ախպորը ծիան փռնում, կըղնըցնում, ասում. — Քյրեզ նհետ պեն օնիմ։ Մին պահանջ օնիմ։

Տղան ասում ա. — Տու ասի, յրես կաղարիմ, մինակ ինձ պեց թող։

Էտ մարթը պեց չի թողում, տրան եր ա պերում ծիյին անա, քցում ճրին մաչը կուրցնում։ Ճրին մին զոլան քցում ա, էն մին ղոլան տըղան տուս ա կյամ, ախպորցը թափշուր անում ուրան կընեգյը, ինքյը էտ մարթին քշտեն մնում։

Էտ մարթը էտ պիծի ախպորը յոր ա օնում, քյնում ուրան ռութկան։ Ըտեղ էտ տղին ասում ա.— Քյինա՛, ինձ հետի Գյեդանգյալմազ սարան Ռուստամ թաքավերին ախճիգյը պեր։

Տղան համոզվում ա։ Էրկուսավ քյընում ըն կյետին կոշտը, էտ պուճուր մարթը տղին մին շիլավ ա տամ, ասում. — Քցի ճըրին մաչը, մին սիպտակ ծի յա տուս կյալու, նստի, քյընա։

Տղան շլավը քցում ա ճուրը, մին սիպտակ ծի յա տուս կյամ։ Մին նստում ա, քյնում կյետին էն մին ղոլը, ծին պեց թողում, շլավը յոր օնում, քյընում էտ կյետին մոտերքումը նստում։

Տեսնում ա մին պառավ ա կյամ։ Հըրցնում ա պըռավան, ասում. — Թաքավերին ախճիգյը ըշտեղ ա ընում։

Պառավը պատմում ա, ասում. — Թաքավերին ըխճկանը հարն օղում ա մարթի տա, քյնում չի, ասում ա՝ հավան չըմ տղին։ Էն ա հըրսանիքը փռնած, վեչիարը մորթած, ամմա ախճիգյը համոզ չի՞։

Տղան ասում ա. — Քյնա՛ պեր ծեր տոն, յըես ընդրան համոզցընիմ, ինձ մհար յոր օնիմ։

Պառավն ասում ա. — Լավ։

Քյնում ա ըխճկանն ասում։ Նա հորը կանչում ա ուրան կոշտը, ասում. — Ա՛ հար, թող քյնամ մին խրրեգյ ման կյամ, կյետին քշտերքը, էլհա կյամ։

Հարը ուրխանում ա, ըխճկանն ասում ա.— Քյնա՛, ախճիգյս, քյնա՛ էս օրերը ման եք, սերտտ հինչ օղում ա, ըրա, քյնա՛։

Հարը ուրխանում ա ընդրա հետի, վեր ախճիգյը խոսելիս չի իլալ, մհենգյ խոսում ա։

Ախճիգյը էտ պառավին նըհետ կյալիս ա, տեսնում մին սիրուն տղա կյետին քշտին կաղնած։ Սիրահարվում ա էտ տղին յրա, ասում. — Յըես քյըզտնից պուք չըմ կյալ։

Տղան ասում ա. — Դե վեր իտի յա, քյնանք։

Ջլավը քցում ա ճուրը, ծին հանում, ախճիգյը յոր օնըմ, քյընում։ Պերում ա հրսցնում էն մին կյեղ սրտանին, էն պուճուր մարթին։

Ախճիգյը տեսնում ա էտ մարթը մին կյեղ ա, մըրոքը՝ էրկու կյեղ։ Ըտրանա վախում ա։ Էտ տըղան ասած ա ինում, վեր «Քյըեզ հուրու տամ, կըքյինիս, ետնան քյըեզ ազադելու յըմ ըտըղան, վախիս վեչ»։ Էտ տըղան ախճիգյը տամ ա էտ մին կյեղ մարթին, ինքյը քյընում։ Քյունում ա, կյողլը կենում մին քոլու քըմակե, մընում ընդեղ։ Էքյսը էտ մին կյեղ մարթը էտ ըխճըկանը թողըմ ա ռութկումը, ինքյը քյընում վըերսի, միչև ուրուգյունը վըերս անըմ, կյամ, էտ ըխճըկանը նըհետ զրուց անըմ։

Էտ տրղան ըխճրկանը սրվրրցնում ա, վրեը էտ մարթը կյա, հրրցնի, տեսնա ընդրա հոքին ըշտե՞ղ ա։ Ախճիգյը վիզավ ա օնրմ, ասում ա. — Իմ հոքուս պարթկը ինի, հրրցնիմ, գյիդամ։

Էտ մին կյեղ մարթը, վեր վրրսրտեղա կյամ ա, ըխճրկանան հրցնում ա, ասում. — Հը, քյեփտ հո՞ւնց ա։

Ախճիգյն ասում ա. — Քյեփս փիս ա, հո՞ւնց պիտի ինի, սաղ օրր միննը-միննակ, ինձ թողրմ ըս, քյընում, կոնյա հոքուտ տեղն էլ ա, ասրմ չրս, վեր նըհետը զուրրուց անիմ։

Ասրմ ա. — Հոքիս էն ա էվլին մաչին։

Էքյսը էտ տրղան կյամ ա էվուլը էրում, ամա հալա ըրխայի-նանում չի։ Ըխճկանն ասում ա. — Բալքյաս խափալ ա, հալա ըսոր էլ մնանք, էլհա հրրցրու։

Էտ մին կյեղ մարթը վեր կյամ ա, էտ ըխճկանը անա հրցնում ա, ասրմ. — Քյեփտ հո՞ւնց ա։

Ասում ա. — Հո՞ւնց պիտի ինի, սաղ օրր միննակ, սրերտս տրխուր, օշրս-մեթկրս քյրեզ յրա, հոքուտ տեղրն էլ դուզ չրս ասրմ, վեր կոնյա նըհետը զուրրուց անիմ, վախտը անց կրենա, միչև քու կյալրտ։

Մարթն ասրմ ա. — Իմ հոքիս շատ տրժեր տեղ ա։ Ընդրա նը-հետ կարիլ չրս խոսիս։

Ախճիգյն ասում ա. — Կոնյա տեղը ասի, գյիդամ։

Վեր շատ ա ասում, էտ մին կյեղ մարթը ասրմ ա. — Հոքիս էն ա Գյեղան-գյալմազ սարումը մին առուծ կա, ընդրա հաքյվին մաչին մին բոթուլ կա, բութուլին մաչին իրեք ծետ կա, իմ հոքին էտ իրեք ծետն ա։

Էտ տրղան էքյսի օրը լոխ գյուգում ա էտ ըխճրկանան, շիլավը քցում ա ճուրը, դաստի էն սիպտակ ծին կյամ ա, էտ տրղան ծիյին նստում ա, պրցրանում երդյինքը, մին էլ քրշանում սորավը մին հենց թխում առուծին, վեր առուծը սատկում ա։ Էտ տրղան առուծին հա-քյին ճրղում ա, բոթուլը տուս օնում, կոտրում, մաչան իրեք ծետ հանում, մինը սպանում, էրկուսը ծեռքին պահրմ։

Վեր տրղան ծետին մինը սպանում ա, էտ մին կյեղ մարթը շահտ ա անրմ, ուրան տոն քրցում, էտ ըխճկանը ասում. — Ինձ տար ճիրին կոշտը, ծրտին մինը սատկալ ա, յրես առանց ճիրի կարիլ չրմ կենամ։

Վեր էն տրղան ծրտերին մինն էլ ա սպանում, էն մին կյեղ մարթը էտ ըխճրկանը ասում ա. — Ինձ ճիրին մաչը կոխի, էլհա տուս կալ։

Էտ ախճիգյը ընդրան փռնում ա, քցում ճուրը հանում, քցում

ճո̂ւրը, հանում։ Վեր տըղան կյամ ա ըխճկանը կոշտը, ախճիգյն ասում ա. — Շուտ ըրա էն մին ծեռն էլ սպանի։

Տըղան էն մին ծեռն էլ ա սպանում, վեր սպանում ա, էտ մին կյեղ մարթը դ̈աստի մըեռնում ա։ Աշխարքըս ազադվըմ ա, լոխ՝ թա մարթ, թա հեյվան ազադվըմ ըն։ Ժողովուրթը ուրխանըմ ըն, քյեփեր սարքում։

Ռոստամ Թաքավերը քառասուն վեշխար ա մորթում, Մեշան շախկա տամ, քյեփ սարքում, ուրա̈ն ժողովուրթին քըշտին էտ տըղին թա̈րիփ անըմ։ Ասում ա. — Վեչ մին ա̈ժդա̈հա̈ իտի ղոչչաղոթուն չի ըրալ օխտանասուն տարվա մաչի։ Էտ օխտանասուն տարումը օխտը հազար մարթ ա քյնացա̈լ Գյեդա̈ն-գյա̈լմա̈զ սարը, էլ ետ չի տըեռալ։ Ետ ա տըեռնում էտ տըղին ասում. — Իմ ախճիգյս շատ լա̈վ ըս ըրալ, վեր կյուղացալ ըս։

Պերում ըն օխտը օր, օխտը քըշեր հըսանիք անըմ։ Տըղին նըստըցնում ըն Թաքավերական Թախտին։

Հըրամմայում ըն վեր էն սիպտա̈կ օշափը, վեր ախպորցը Թափշուր ար ըրալ, պերիլ տան կոշտը։ Իտի էլ անըմ ըն։ Էտ ըխճըկանն էլ փսակըմ ըն լոխճան մեծ վեզիրին տըղին նըհետ։ Էլհա օխտը օր, օխտը քըշեր հըսանիքյ ըն անըմ։

Էտ քառասուն ախպորցը մաչին, կուճի ախպերը լոխճան ղոչչաղ ա տուս կյամ, համ ուրա̈ն քառասուն ախպորցը հետե լա̈վ-լա̈վ ըխճըկերք ա ճարում, համ օշափներին ա կըտորում, համ էն մին կյեղ, մրոքը էրկու կյեղ կախարթ մարթին ա փըշըցնում, Գյեդա̈ն-գյա̈լմա̈զ սարին կըպըքըշկոռը ետ անում, ժողովուրթին արխայինցնում, համ էլ Ռոստամ էրկունշի Թաքավերը տըեռնում։ Իտի տըղերք Թող մըեզ շատ ինին, խեղճ ընք, մեխկ ընք, աստուծ իտի տըղորցը շատ պահի, կուռանը ղվաթ տա, մեշկը դալար պահի։